



**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**Մասնագիտության կրթական ծրագրի
ընթացիկ մոնիթորինգի ընթացակարգ**

ԵՐԵՎԱՆ 2014

Մասնագիտության կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի ընթացակարգը մշակվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից:

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

07.02.2014 թ. (արձանագրություն № 6)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Օգտագործված հապավումներ.....	4
Մասնագիտության կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի ընթացակարգ.....	5
1.Նպատակ	5
2. Իրավասություններ և պատասխանատվություն`	6
3. ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգից ստացված տվյալների օգտագործումը և պահպանման սկզբունքը.	8
4. Հղման փաստաթղթեր`	8

Օգտագործված հասցեներ

ՆՄՀ - Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

ԱՀՈՒԱԿ - Ազրոպարենային համակարգի ուսումնասարտադրական կենտրոն

ԳԽ - գիտական խորհուրդ

ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր

ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ազրարային համալսարան

ՈՒՄԿ - Ուսումնամեթոդական կենտրոն

ՈԱ - Որակի ապահովման

ԿԲՌՊՈՎԻ - կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի

վերահսկման, ինքնավերլուծության

Մասնագիտության կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի ընթացակարգ

1. Նպատակ

Մասնագիտության կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգն ուղղված է ՄԿԾ-ի շարունակական բարելավմանը:

ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգի գլխավոր նպատակ է՝

Աջակցել ՄԿԾ պատասխանատուներին բարելավել առկա կրթական ծրագիրը և վերացնել ընթացիկ խնդիրներն ու խոչընդոտները՝ չսպասելով կրթական ծրագրի ավարտին:

ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգի խնդիրներն են՝

- **ստուգել-գնահատել**՝ պլանավորված գործընթացների համապատասխանությունն ու արդյունքների արդյունավետությունը,
- **բացահայտել**՝ գործընթացի պլանավորման և իրականացման ընթացքում թույլ տրված թերացումները, խոչընդոտները,
- **բարելավել**՝ առաջարկել անհրաժեշտ քայլեր առկա թերացումները վերացնելու և հայտնաբերված խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:

ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգի օբյեկտներն են՝

- ՄԿԾ փաթեթը,
- ուսումնական պլանը,
- առարկայական ծրագրերը,
- դասավանդման գործընթացը,
- դասընթացներից ակնկալվող ուսումնառության արդյունքները,
- ուսանողների գնահատման մեթոդները և այլն:

ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգի գնահատման ցուցիչներ`

Կրթական ծրագրի գնահատումը իրականացվում է ըստ գնահատման ցուցիչների` համապատասխան «Կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքսի» կարգի:

ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգի գնահատման մեթոդներ`

ՄԿԾ-ի բաղադրիչները գնահատվում են քանակական և որակական հետազոտության մեթոդների միջոցով, ակնկալիքների և ստացված արդյունքների համեմատական վերլուծությամբ, իսկ մշտադիտարկման ժամանակ` համալսարանի կողմից հաստատված որակի գնահատման ցուցիչներով:

2. Իրավասություններ և պատասխանատվություն`

ՄԿԾ-ի ամբողջական ընթացիկ մոնիթորինգ իրականացնելու համար ֆակուլտետի գիտական խորհրդում ընտրվում է հանձնախումբ, որի անդամ պետք է հանդիսանան.

- Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմից 2 հոգի,
- Ֆակուլտետի ՈԱ պատասխանատու 1 հոգի,
- կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինից 1 հոգի:
- ուսանող 2 հոգի

ՄԿԾ առանձին հատվածների ընթացիկ մոնիթորինգի համար պատասխանատու և իրավասու են.

Ուսումնական պլանի գնահատման համար իրավասու են.

- ֆակուլտետի մեթոդ խորհուրդը,
- համալսարանի մեթոդ խորհուրդը,
- կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը:

Ուսումնական պլանները գնահատելիս ներգրավում են նաև արտաքին շահակիցներ՝ կրթության և ազրարային ոլորտի մասնագետներ:

Առարկայական ծրագրերի գնահատման համար պատասխանատու են.

- ամբիոնները,
- ֆակուլտետի մեթոդ խորհուրդը,
- ֆակուլտետի ՈԱ պատասխանատուները,
- կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը:

Դասավանդման գործընթացի գնահատման համար իրավասու են.

- ուսանողները,
- ֆակուլտետի ՈԱ պատասխանատուները,
- Համալսարանի ղեկավարության կողմից կազմված հանձնախմբերը,
- ուսումնամեթոդական կենտրոնը:

Ուսումնառության ռեսուրսների ապահովվածության գնահատումը իրականացնում են.

- կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
- ֆակուլտետի ՈԱ պատասխանատուները,
- ուսանողները:

Դասավանդման ռեսուրսների ապահովվածությունը գնահատվում է

- կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը դասավանդող անձնակազմը,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
- ֆակուլտետի ՈԱ պատասխանատուները,
- ուսանողները:

Ուսանողների գնահատման մեթոդները ուսումնասիրվում և գնահատվում են

- ամբիոնների,
- ֆակուլտետի մեթոդ խորհուրդի,
- ֆակուլտետի ՈԱ պատասխանատուները,
- ԿԲՌՊՈՎԻ բաժինը,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
- ուսումնամեթոդական կենտրոնը:

3. ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգից ստացված տվյալների օգտագործումը և պահպանման սկզբունքը

Յուրաքանչյուր ՄԿԾ ընթացիկ մոնիթորինգից, մշտադիտարկումից և ստուգումներից հավաքագրված տվյալները պահպանվում են ՀԱԱՀ ԿԲՌՊՈՎԻ բաժնի տվյալների բազայում, ենթարկվում են վերլուծության, որակական և քանակական գնահատման: Դրանք հիմք են ծառայում կրթական ծրագրերի բարելավմանը ուղղված որոշումների կայացման ժամանակ:

4. Հղման փաստաթղթեր`

- Կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթ (հաստատված է ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից 31.08.2012 թ. (արձ. №1))
- Կրթական ծրագրի իրականացման մոնիթորինգի կարգ (հաստատված է ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից 31.08.2012 թ. (արձանագրություն №1))
- Մասնագիտության կրթական ծրագրի պարբերաբար վերանայման քաղաքականություն (հաստատված է ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից 31.08.2012 թ. (արձ. №1))
- Կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքսի կարգ (Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 24.05.2013 թ. (արձանագրություն № 13)):